«Երկրորդ սէանսի ժամանակ ես վկայ էի աւելի զարմանալի երեւոյթների, քան թէ առաջնի ժամանակ, և իմ մէջ ոչ մի կասկած չը մնաց, որ Ալէքսիսը պարզատես է։ Բայց եմ անում նոր խաղաթղթերի կապ, որ հետս էի բերել. խառնում եմ թղթերը և բաժանելիս առհասարակ բոլոր նախազգուշութիւններն եմ ձեռք առնում, որոնք սակայն բոլորովին անօգուտ են լինում, որովհետև Ալէքսիսը կանդնեցնում է ինձ, ասում է ամեն մի թղթի անունը, հէնց որ ես այդ թուղթը բաժանելու միջոցին դնում են սեղանի վրայ նրա առաջ։

«Կողիրի (հմայատար) թագաւորն է դալիս ինձ մօտ—ասաց նա։—Բայց դուք դեռ ես չը գիտէք, որ թուղթն է կողիր լինելու։—«Ահա կը տեսնէք»—պատասխանեց նա—«չարունակեցէք»։ Եւ իսկոր՝ ես բաց արի կողիր պիկի տուզ, և նրան հաջաւ պիկի թագաւոր։ Խաղը չարունակւում էր. նա միառմի ասում էր բոլոր թղթերը, որ ես պիտի դնայի, թէև ես նրանց պահում էի ձեռքիս մէջ ծալած, սեղանի տակ։ Բոլոր իմ թղթերը նա ծածկում էր, առանց իր թղթերը բաց անելու, չուռուանց, մէջքի կողմերը վերանց, և նրա ամեն վայր եկած թուղթը բոլորովին համապատասխանում էր իմ թղթին։ Վերադարձայ այդ սէանսից չափազանց մոլորուած և շփոթուած, և բոլորովին համոզուած եմ, որ ոչ մի բախտի բերմունք և պատահական բան չը կար այդտեղ, և որ ոչ մի բարձրագոյն ազդեցութիւն չէ կարողացել հասնել այսպիսի զարմանալի արդիւնքներին»։

Այժմ ես կը հարցնեմ ընթերցողին. մթթէ մի որևէ նիւթ դատելու և հերքելու այն եղանակը, որ իւրացրել են կենդանական մագնիսականութեան հակառակորդները,—բարեխիղճ է, գիտնական է, նոյնիսկ հիմնաւոր ու խելացի։ Զէ որ մենք նրանց չենք խնդրում բոլոր փաստերին կուրօրէն հաւատալ և ընդունել, կամ խոյս տալ ամենախիստ քննադատութիւնից, եթէ վերջինս հիմնուած է ամեն տեսակ առարկութիւնների բարեխիղճ քննութեան վրայ։ Բայց այս դէպքում, որպէս ես ցոյց տուի մի քանի պարզ օրինակներով, հակառակորդները աշխատում են հասարակական կարծիքի վրայ ազդել նրանով, որ դիտմամբ լռութիւն են պահպանում փաստերի մասին,—նրանով, որ փոխարէն ամենազօրեղ փաստերն ու առարկութիւնները հաշւի առնելու, նրանք բռնում են ամենաթոյլ փաստերի և առարկութիւնների պոչից, և վերջապէս նրանով, որ առանց այլևայլութեան բացասում են ամենավստահելի և արժանաւոր վկայութիւնները։ Ի՞նչ կը մտածէինք մի մարդու մասին, որը հէնց այդ եղանակով փորձէր դատել արդէն ամենքից ճա-

նաչուած դիատութեան շրջանից վերցրած որևէ վիճակի հարցի մասին, — որը, ապիտատրաբ կամ դիտամամբ, անտես անելը այդ նեխի հետազօտող ամենանշանաւոր դիտնականների ամենամանրաքնին աշխատութիւնները և այդպիսով, փոխարէն հատարակութիւնը կրթելու և լուսաւորելու, ջանալ հաւատացնել ընթերցողներին, թէ այդ անուան հետազօտութիւնները անգի չեն ունեցել։ Մի այդպիսի մարդ մէկ անգամից կը զրկուէր որևէ հարցում հեղինակութիւն համարուելու իրաւունքից, և նրա բոլոր յաջորդ գրութիւնները ոչ մի ուշադրութեան արժանի բան կը համարուէին։ Մինչդեռ, մեր հարիւրամեակի մեծ մասի ընթացքում, մեամերիսմին վերաբերեալ ամենակարևոր և ամենահետաքրքրական հետազօտութիւնները հէնց այդպիսի անարժան կերպով անտես էին անուած, և այն էլ այնպիսի մարդկանց կողմից, որոնք մեծ անուն են վայելել դիատութեան ուրիշ ճիւղերի մէջ։ Այս է պատճառը, որ մենք մեամերիսմի երևոյթների և մանաւանդ պարզաբանութեան գոյութեան դէմ յարուցած հակառակութիւնը հարկաւորուած ենք որպէս բացատրութիւն նկատել դիատութեան ուրիշ ճիւղերի մէջ այս դարի ցոյց տուած արագ առաջադիմութիւնից։

Այժմ անենք, թէ ինչ գործադրութիւն է ունեցել կենդանական մագնիսականութիւնը, մանաւանդ որ այդ գործադրութիւնը աւելի կատարի և աւելի անարդար հակառակութիւն յարուցեց, քան թէ ինքը մեամերիսմը։

1829 թ. Պարիզի աչքի ընկնող վիրաբոյժներից մէկը՝ Կրլոկէ, մեամերական քնով ննջեցնելով մի հիւանդին, կտրեց նրա կրծքից խիրար (ռակ), և հիւանդը այդ գրութեան մէջ ոչ մի ցաւ չէր զգում, թէև խօսում էր։ Նոյն եղանակով Ֆրանսիայում մի քանի անգամ ատամ հանեցին և կատարեցին շատ և շատ ուրիշ օպերացիաներ, որոնցից մի քանիսը սաստիկ ծանր էին, ինչպէս էր, օրինակ, Շերբուրգեան բուժարանում մի հիւանդի ստորին ծնոտի մէկ մասի դուրս կտրելը։ Տասներկու տարուց յետոյ մեամերական քնի օգնութեամբ Անգլիայումն էլ սկսեցին օպերացիաներ անել. բայց չը նայելով այն բանին, որ Ֆրանսիայի Բժշկական Ճեմարանի մանրամասն նկարագրած փորձերը ցոյց էին տուել, որ մագնիսական քունը մարդուս անզգայ է դարձնում դէպի ցաւը,—Անգլիայի մասնագէտ բժիշկները կասկածանքով վերաբերուեցին այդ օպերացիաներին և ամենամիրաւորական լուրեր էին տարածում ամեն մէկի մասին, ով որ մասնակցում էր դրանց։

1842 թ. Նոյեմբերի 22-ին Արքայական Բժշկական և Վիրաբուժական Ընկերութեան մէջ կարդացուեց մի զեկուցում, թէ

ինչպէս մեսմերական քնի ժամանակ անդամահատուել է ազդրը։ Հիւանդը մի բանուոր էր, որը հինգ տարի ձախ ծնկի հնացած տկարութիւն էր ունեցել, որից սաստիկ ցաւեր էին սկսում, հէնց որ ոտի յօդը շարժեցնելիս է եղել։ Օպերացիայից առաջ նա չէր քնել երեք գիշեր։ Նրան քնացրել էր փաստաբան Տոսհէնը, իսկ անդամահատել էր սիվայր Լօրդը, Նոտինգամշիրի Վելլօու շրջանի հիւանդանոցի վիրաբոյժը։ 20 րոպէ տեղ օպերացիայի միջոցին հիւանդը կատարելապէս հանդարտ էր մնացել և ոչ մէկ անդամ չէր փոխել դէմքի խաղաղ արտայայտութիւնը. նկատելի չէր եղել ոչ մի շնչին ցնցում մարմնի կամ ձեռք ու ոտի վրայ։ Կամաց-կամաց արթնանալով՝ նա վերջապէս բոլորովին հանդիստ ուշքի էր եկել, և երբ հարցրել էին, պատասխանել էր, որ չը գիտէ, թէ իրան ինչ էին անում, ու բոլորովին ցաւ չէ զգացել։ Այնուհետև նա բոլորովին առողջացել էր և ոչ մի վատ նշան չէր ունեցել։

Ահա այս ամիթով ծաղկեցին բոլորովին վայրահաչ վէճեր։ Միստեր Կոլսոնը յայտարարեց, որ ցաւ չարտայայտելը մի սովորական բան է, և որ ինքը չէ կասկածում, թէ հիւանդը առաջուց նախապատրաստուած է եղել այդ բանին։ Ուրիշները ասում էին, որ հիւանդը ուղղակի ձևանում էր և կեղծում։ Իսկ մէկը նոյնիսկ հանդիսաւոր կերպով յայտնեց, որ եթէ նոյնիսկ ինքը, անձամբ, այդ դէպքը իր աչքով տեսած լինէր, դարձեալ չէր հաւատայ։ Այնուհետև խօսեցին մասնագէտները։ Դ-ր Մարշալ Գոբլը, անդրադարձ (ռեֆլեկսային) շարժումների հաչակաւոր հետազօտողը, յայտարարեց, որ դէպքը ինքն իրան հակասում է։ Բենիամին Բրոդին այն համոզմունքը յայտնեց, թէ հիւանդը բընութիւնից անզգայ է եղել դէպի ցաւը։ Նա համաձայն էր Մարշալ Գոբլի կարծիքի հետ, թէ երբ կտրում են մէկ ոտը, միւսը պէտք է անպատճառ նոյնպէս շարժուի, և թէ բոլորովին համամիտ է ֆրանսիական երկու զեկուցումների հետ, որոնք իբր թէ մեսմերիսմի դէմ են ուղղուած եղել։ Միստեր Լիստոնը և Բրէնսբի Կուպերը պարզ ծաղր ու ծանակ էին անում այդ դէպքի վրայ, բայց դ-ր Մէյօ յայտնեց, որ այդ զեկուցումը մեծագոյն կարևորութիւն ունի և որ ծաղրելու ոչ մի հիմք չը կայ։ Վուդը, որը ներկայ էր գտնուել օպերացիային, վկայեց, որ զեկուցումը կազմուած է ամենայն ճշտութեամբ, և մասնաւորապէս արեց այն հանգամանքի վրայ, որ օպերացիայից առաջ հիւանդը տանջուելիս էր եղել սաստիկ ցաւից և որ օպերացիայի միջոցին նա ցոյց չէր տուել ոչ թէ միայն ցաւի ոչ մի նշան, այլև ցաւը թաղցընելու ոչ մի փորձ։ Դ-ր Էլլիոտսոնը նոյնպէս չեշտում էր, որ տրամաբանութիւն չը կայ առարկութիւնների մէջ։ Սակայն հա-

կառավարիչները բոլորովին ապէս լինելով այդ առարկայից, յաջորդ նիստի մէջ հրաժարուեցին հաստատել իրանց արտայայտած կարծիքների մանրամասնութիւնները, որպէս և հանուեցին արձանագրութիւնից։

Այսպէս դարձ ունենք բարձրագոյն մարդկանց ազիատութեան հետ, մարդկանց, որոնք բացատրում էին այնպիսի փաստեր, որ բազմիցս դիտել էին իրանցից ոչ պակաս արժանահաւատ մարդիկ։ Ահա այդ մարդիկն էին, որ ուրիշ ազէանների հետ մեղադրում էին վիրաբոյժներին, թէ նրանք կաշառում են հիւանդներին, որպէսզի որոնք օպերացիայի միջոցին ցաւ չ'արտայայտեն, նրանք էին, որ մեղադրեցին դ-ր Էլլիոտսոնին «գիտութեան սահմանը պղծելու» մէջ, մինչև այս երեւելի բժշկին Լոնդոնի համալսարանի ուսուցչապետական ամբիոնից նրա համար, որ անդադար պնդում էր մեսմերական երեւոյթների ուսումնասիրութեան վրայ և հրատարակում էր իր փորձերի արդիւնքները։ Դ-ր Էլլիոտսոնը սակայն չուտով իրան արդարացրեց բոլոր ամենաբարեխիղճ մասնագէտ-բնակերակիչների աչքում, հրատարակելով մի այնպիսի անդրդիր քանակութիւն անցաւ օպերացիաների դէպքերի, որ սարսեց վիրաբոյժ անհերքելի փաստ հանդիսանալ նրանց։ Նրան թիկն տուեց դ-ր Էսդէյլը, որը նկարագրեց աւելի քան 300 դէպք՝ Կալկաթայի հիւանդանոցներում թէ իր և թէ ուրիշ վիրաբոյժների ձեռքով կատարած այդպիսի օպերացիաների. այդ դէպքերի ստուգութիւնը հաստատել է Բենգալիան կառավարութեան կողմից յատկացրէս այդ նպատակով կազմուած մասնաժողովը, նոյնպէս և ինքը՝ գաղութի գեներալ-նահանգապետը։ Այդ առիթով տեղի ունեցած զեկուցումները ցոյց տուին, որ այս անգամ էլ հիւանդներին կարելի էր մեղադրել խաբերայութեան մէջ, որովհետև նրանց մօտ էլ չէին նկատում անդրադարձ ցնցումներ մարմնի համապատասխան անդամների մէջ։ Էլլիոտսոնը հիմք ունէր հեղնական եղանակով դրելու այս առիթով։ «Ցաւալի է լսել—ասում էր նա,—որ այդ ասիացիք ընդունակ են նոյնպիսի յանդուգն ճարպիկութեամբ խաբելու և ձեւանալու, որպէս և Եւրոպայի գեղեցիկ սեռը, կնամարդը։ Հնդկացին նոյնպիսի ագիտութեամբ չէ իմացել իր անդամները կառավարել։ Նա էլ չէ իմացել, որ այն միջոցին, երբ կտրելիս են եղել նրա ձախ կուռն լոգակաները, նա պէտք է շարժեցնէր աջ կուռը, եթէ օպերացիայի ժամանակ ճիշտ որ ցաւ զգալիս չէ եղել, մինչդեռ նա բոլորովին անշարժ է ունեցել այդ կուռը։ Ոչ, սեամորթ ցեղերն էլ նոյնչափ բարիկ են եղել բնախօսութիւնից, որչափ և սպիտակամորթները»։

Փաստերը սակայն այնպէս արագ բազմանում էին և այն-

պէս վստահելի վկայութիւններով էին հաստատուում, որ մի քանի տարուց յետոյ դ-ր Նորլը, Ջոն-Ֆորբէսը և դ-ր Կարպենտերը պէտք է ճանաչէին նրանց և միևնոյն ժամանակ նաև խոստովանուէին, որ այդ փաստերը հերքող մեծ մարդիկ կարող են սխալուած և տգիտութիւն ու նախապաշարմունք ցոյց տուած լինել, մեղադրելով ուրիշներին խաբեբայութեան և նենդաւոր դիտաւորութեան մէջ։ Բայց հէնց նոյն միջոցին, երբ ամենքից ճանաչուեց մեսմերիսմի կարևոր նշանակութիւնը և ընդունուեց, որ նա ամենազօրաւոր օպերացիաները անցաւ է դարձնում ու նպաստում է արագ առողջանալուն,—վրայ հասաւ անդդայացնող միջոցների դիւտը (եթերի, քլորոֆորմի)։ Եւ քանի որ յաւը կարող այս միջոցները աւելի հեշտ են գործադրուում և անպայման ներգործում են բոլոր հիւանդների վրայ, հետևապէս մեսմերիսմի դրաւած ուշադրութիւնը թուլացաւ, և նորից սկսեցին արհամարհել նրան։ Այս արհամարհման հետ նորից վերականգնացան թէ առաջուայ նախապաշարմունքները և թէ առաջուայ անվստահութիւնը։ Եւ թէև ապացուցուած էր, որ բացի օպերացիաների ժամանակ ունեցած կարևոր նշանակութիւնից, մեսմերիսմը անմիջապէս մեղմացնում է և նոյնիսկ բժշկում է զանազան հիւանդութիւնները,—այնուամենայնիւ նա մոռացուեց, և բժիշկների ահագին մեծամասնութիւնը սկսեց նրան նայել իբրև մի կասկածելի բանի կամ իբրև ինքնախաբէութեան վրայ։ Գրեթէ կէս դար նա բարձի թողած էր մնում, մինչև որ նորից ուշադրութիւն դարձրին նրա վրայ մի քանի ֆրանսիական հիւանդանոցներում, որտեղ նախորդ մեսմերականների նկարագրած բոլոր երևոյթները կրկին աչքի անցրին և բացի այդ՝ նկատեցին նոր, աւելի ևս անսովոր երևոյթներ։

Ներկայ դարի վերջին քառորդի ընթացքում այս և ուրիշ տարօրինակ հոգեկան երևոյթների ուսումնասիրութիւնը բաւականին լայն ծաւալ ստացաւ։ Ամեն քաղաքակիրթ երկրում ըսկսեցին առանձին ընկերութիւններ հաստատել նրանց ուսումնասիրութեան համար, և բազմաթիւ աշխատութիւններ հրատարակուեցին այս խնդրի առիթով։ Կամաց-կամաց, մէկառմէկ, ինքնախաբէութիւն կամ չափազանցութիւն համարուող փաստերը ստոյգ և արժանահաւատ փաստեր ճանաչուեցին։ Ստիգմատիսմի վրայ *), որ նկատուում էր երբեմնակի կաթոլիկ եկեղեցիներում, ոչ ոք արդէն չէր ծիծաղում և կղերականների

*) Ընթանոսութիւնը ոտների կամ ձեռների այն տեղերից, որտեղից Յիսուսը մեխուած էր խաչին։

Ե. Թ.

կեղծիք չէր անուանում։ Մարերի փոխադրութիւնը հնաւանութիւնից, ինքնարերաբար (automatik) դրութիւնը, «դասանցական ճաներբ» և պարզամեաութիւնը փորձերով ապացուցուած էին անկասկած ընդունակութիւնների և մեծ դիտութեան ոչ մարդկանց ներկայութեամբ, որոնցից շատերը դեռ ևս կենդանի են, ինչպէս որ այդ երևոյթները ցոյց էին տրուած և նկարագրուած էին գարես սկզբում Նոյնպիսի համաս հետաքրքրութիւնների ձևորով։ Աւելի ևս արտասովոր երևոյթները—«դեղը», նախագրգռումները, ապագայի մանրամասն նախագուշակութիւնը, տեսիլները, միաժամանակ շատերի համար լսելի ձայները կամ թրթռթրթռոցները, դանդաղաբութիւնը, երաժշտական նուագածութիւնը, քարաձգութիւնը և կարծր մարմինների շարժումները առանց մարդկային ձեռքի դիպչելու և առանց որևէ յայտնի ֆիզիկական պատճառի,—այս ամենը տեղի է ունենում այժմ էլ մեր մէջ այնպէս, որպէս տեղի է ունեցել առաջ էլ բոլոր դարերում։ Այդ երևոյթները այժմ աւելի ուշադիր դիտողութեան են ենթարկուած և հետզհետէ անդամանալի կերպով ստոյգ են ճանաչուում, թէև դիտնականների և գրողների մեծ մասը դեռ չը դիտէ, թէ որչափ անթիւ-անհամար փկայութիւններ են հաւաքուած, և այդ պատճառով ծաղր են անում այդպիսի հետազօտութիւնների վրայ։ Համեմատաբար սակաւագէպ լինելով, այդ երևոյթները միայն քչերին են յայտնի, բայց որ դրանք գոյութիւն ունեն, այս բանի փկայութիւնները արդէն չափազանց բազմաթիւ են, և կասկած չը կայ, որ գալոց հարիւրամեակում դրանք ստոյգ կը ճանաչուեն բոլոր անաչառ դիտնականների և կրթուած մարդկանց մեծամասնութեան կողմից։

Մի մեծ խնդիր, որ ես կ'ուզէի տալ այս առարկայի նրկարագրով, այն է, որ ընթերցողը ամենայն թերահաւատութեամբ վերաբերուէր ամեն տեսակ ապրիորական (կանխամիտ) դատողութիւններին և փաստ չընդունէր նրանց, որոնք տան մարդկային դիտութիւնների և մանաւանդ հոգեբանական հետազօտութիւններ անուն կրող ճիւղի առաջընթացութեան ամբողջ պատմութիւնը մեզ այն հաստատ համոզմունքի է բերում, որ ամեն անգամ, երբ դիտնականները կամ ժողովրդական ուսուցիչները սկսել են բացատել փաստերը, առաջուց ընդունելով թէ սկզբունքների տեսակէտով նրանց գոյութիւնը անկարելի է, կամ հիմնուելով այն բանի վրայ, թէ նրանք հակասում են «բնութեան օրէնքներին»,—բացատել փաստերը, որ դիտել են և մատնացոյց են արել միջին բարեխղճութեան և միջին մտաւոր զարգացման ոչ բազմաթիւ հետախոյզները,—այդպիսի

դէպքերում բոլոր այդ բացասողները միշտ անիրաւացի են դուրս եկել։

Ապագայ դարերը անտարակոյս կը սկսեն զարմանալ, տեսնելով թէ այն ահագին եռանդը, որ մեր հարիւրամեակի մեծ մարդկանցից շատերը վատնել են իրանց համար անախորժ ճշմարտութիւնների դէմ կուելու նպատակով, և թէ այն անհուն ազիտութիւնը, որ նրանք ցոյց են տուել, ենթադրելով, թէ ապրիորական, կանխամիտ առարկութիւնները, զանազան մեղադրանքները կեղծաւորութեան, խելագարութեան կամ անձնական անբարեխղճութեան մէջ—կարող են փաստերի տեղը անցնել։

XVIII *)

ԹԱՂԻՆ ՊԱՏՈՒՐԱՍՏՈՒՄԸ—ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ Է. ՊԱՏՈՒՐԱՍՏՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐ ԼԻՆԵԼԸ—ՑԱՆՑԱՆԵՔ

Ժամանակակից քաղաքակրթուած մարդկութեան մեծապոյն պատուհասների մէջ առաջին տեղն են բռնում համաճարակ վարակիչ հիւանդութիւնները, որոնց պատճառն են հանդիսանում, ինչպէս արդէն այժմ ընդհանուրից ճանաչուած է, մանրաբջջային օրգանիսմները. այս օրգանիսմները արագ բազմանում են իրանց զարգացման համար նպաստաւոր պայմաններ ներկայացնող մարմինների մէջ և յաճախակի նոյնիսկ մահ են առաջացնում։ Այսպիսի հիւանդութիւններն են—ժանտախտը, ծաղիկը, կարմրուկը, կապոյտ հազը, դոդոջքը, բծաւոր և փորի հարբինքը, դիֆտերիտը ու քոլերան։ Այս հիւանդութիւնների զարգացմանը առանձնապէս նպաստում են—ապականուած օդը և ջուրը, նեխուող գործարանաւոր նիւթերը և այսօրինակ հակառողջապահական պայմանները, որոնցից են այս հիւանդութիւնները «վարակիչ հիւանդութիւն» անունը ստացել։ Սրանցից ամենասարսափելին—ժանտախտը—այնտեղ է տարածուած,

---

*) Այս գլուխը թարգմանում ենք բազմաթիւ և ընդարձակ կրճատումներով։ Հեղինակը նուիրել է պատուաստման հարցին գրքի գրեթէ քառորդ մասը՝ կամենալով ազդել անգլիական հասարակական կարծիքի վրայ և փոխել տալ այն օրէնքը, որով ամենայն խստութեամբ պատժւում էին Անգլիայում՝ ծաղիկ կտրելուց խուսափողները։ Բոլէսը հասաւ իր նպատակին—նորերս անգլիական պարլամենտը վերացրեց պատուաստման պարտաւորեցուցիչ լինելու օրէնքը։

որանց մարդիկը սաստիկ հակառողջապահական պայմանների մէջ է ապրում թէ օդի, թէ ջրի և թէ ընդհանուր մաքրութեան կողմից։ Դեռ 250 տարուց աւելի չէ անցել, ինչ-որ մանաւանդ մի այնպէս սոսկալի հիւանդութիւն էր եղած Անգլիայում, ինչպէս ծաղիկը ներկայ դարում, բայց կեանքի պայմանների մի հնչին և աննշան բարելաւումը բոլորովին արդէն ոչնչացրել է այդ հիւանդութիւնը և նրա տեղը յայտնի չափով բռնել են ծաղիկը, քոլերան և դաղցրը։ Այս հիւանդութիւնների տարածուելու եղանակը դեռ հիշա յայտնի չէ։ Կան, որ կարծում են թէ քոլերան, դիֆտերիտը և փոքի հարիւրը տարածում են հիւանդների՝ ջրի մէջ ընկած կղկղանքից։ Ուրիշ հիւանդութիւնները անցնում են մէկից միւսին կամ չփման օդնութեամբ կամ օդի միջոցով, բայց ինչ էլ որ լինի, հիւանդարար տարրերի ծլելու և բազմանալու համար նպաստաւոր պայմաններ են անհրաժեշտ։ Սակայն կան բազմաթիւ մարդիկ, որոնք իրանց ամբողջ կեանքում բոլորովին անընդունակ են վարակուելու այդ հիւանդութիւններից մէկով կամ միւսով, և ունենք բազմաթիւ ապացոյցներ, որ եթէ որևէ երկրի ամբողջ ազգաբնակութիւնը ապրում է առողջ պայմանների մէջ, այսինքն բաւականաչափ մաքուր օդ, ջուր և առողջարար սնունդ ունի, այդ հիւանդութիւններից ոչ մէկը չէ կարող բուն դնել նրա մէջ, և հանճարակները անյապաղ բոլորովին կ'անհետանան, ինչպէս որ տեսնենք ոչնչացել են Անգլիայում առաջ այնպէս տարածուած ժանտախտն ու բորոտութիւնը։

Բայց անցեալ դարում այս բանը չը գիտէին և չէին հաւատում կեանքի պարզ առողջարար պայմանների զօրութեանը, պայմանների, որոնք միակ իսկական պաշտպանութեան դրաւական են կազմում այդ հիւանդութիւնների դէմ։ Օրինակ, առաջ մարդիկ սաստիկ վախենում էին ծաղկից, որը այժմեան պէս մի համաճարակ հիւանդութիւն էր և մեծ մասամբ սխալ բժշկութեան շնորհիւ յաճախակի վերջանում էր մահով, իսկ աւելի յաճախ այլանդակում էր դէմքն ու նոյնիսկ կուրացնում։ Այն է պատճառը, որ երբ տասնեհիններորդ դարի վերջերում արևմուտքից Անգլիա մտաւ ծաղկի պատուաստմանը նոր եղանակը *),

*) Պատուաստում էին թեթև հիւանդացած մարդու ծաղկից վերցրած նիւթը։ Արդէն հնուց թէ արևելքում, Ասիում և թէ Եփրիկէում տարածուած էր այն համոզմունքը, որ մէկ անգամ ծաղկով հիւանդացածը այլևս երբէք, ամբողջ կեանքում չէ հիւանդանում. այս հիման վրայ աշխատում էին մարդուն դիտմամբ հիւանդացնել, պատուաստման օգնութեամբ, ծաղկի թեթև տեսակով, որպէսզի ցմահ պաշտպանուած լինի այդ հիւանդութեան սարսափելի հետևանքներից։ Ծ. Թ.

այդ եղանակը արագ տարածուեց այստեղ, որովհետև դրանից առաջացած հիւանդութեան թեթև տեսակը սակաւ էր մահ կամ այլանդակութիւն առաջացնում, և մարդիկ հաւատում էին, որ այդպիսի պատուաստումը նախապաշտպանում է ծաղկով վարակուելուց։ Սակայն շատ չուտով բացուեց, որ պատուաստումից առաջացած թեթև ծաղիկը նոյնչափ վարակիչ է, որպէս և իսկական ծաղիկը, և որ կարող է նոյնչափ էլ վտանգաւոր լինել վարակուածների համար։ Գուցէ պատուաստման այդ եղանակը փրկեց էլ մի քանի առանձին անհատների կեանքը, բայց ընդհանրապէս աւելացրեց ծաղկից վարակուելու և մեռնելու դէպքերը։

Այսպիսի հանգամանքների մէջ հասկանալի է, որ ամենայն ցնծութեամբ ընդունուեց պատուաստման մի ուրիշ եղանակը, որը թէ թեթև, ոչ վարակիչ հիւանդութիւն է առաջացրնում և թէ, ընդհանուրի կարծիքով, նոյնչափ պահպանում է ծաղկով վարակուելու հնարաւորութիւնից, որչափ և նախկին եղանակը։ Այս նոր եղանակը պատուաստը վերցնում էր կովի ծաղկից։ Սրա առաջարկողը Ջեններն էր *), որը 1798 թ. հրատարակած «Հետազօտութեան» մէջ հաւաքել էր, իր համողմունքով, այս երևոյթը հաստատող փաստերը, թէ կովի ծաղկով վարակուածը այլև մինչև վախճան, երբէք չի վարակուի իսկական ծաղկով։

Այժմեան գիտութեան լոյսով սակայն տեսնում ենք, որ Ջեննների բերած փաստերը բոլորովին համոզիչ չեն, ինչպէս ապացուցել է դ-ր Կրէյտոնը։ Այն ժամանակ, ինչպէս ըստ երևոյթին այժմ էլ, ոչ ոք մանրաքննին և զգոյշ փորձեր չ'արեց, պատուաստելով իսկական ծաղիկը միաժամանակ և միևնոյն եղանակով երկու խումբ մարդկանց, այնպէս որ մէկ խմբին նախօրօք պատուաստուած լինէր կովի ծաղիկը, միւսին՝ ոչ, և հետևանքները ուշի ուշով արձանագրուէին և համեմատուէին բո-

---

*) Ջեններ (1749—1823) անգլիացի բժիշկը նկատել էր, որ կովը կթելու ժամանակ ծաղկով վարակուածները այլևս իսկական ծաղկով չեն հիւանդանում։ Նա վարակում էր կովի ծաղկով երեխաներին ու հասակաւորներին և ապա պատուաստում էր իսկական ծաղիկը—և երեխաներն և հասակաւորները այս անգամ չէին վարակուում։ Ուղիղ է՝ իսկական ծաղկի պատուաստումը տեղի էր ունենում կովի պատուաստումից ոչ ուշ, քան հինգ-եօթը տարուց յետոյ, սակայն Ջեննների փորձերը համոզեցին ամենքին, որ առաջարկած եղանակը ընդմիշտ, ցմահ փրկում է վարակուելու հնարաւորութիւնից, ուստի և սա արագ տարածուեց թէ Անգլիայում, թէ մայր-ցամաքի վրայ և թէ բոլոր քաղաքակիրթ երկիրներում։

Ծ. Թ.

յորմին անաչառ մարդկանց ձեռքով։ Այսպիսի «վերաքննիչ» փորձերը ներկայումս անհրաժեշտ են այսքան մեծ կարևորություն ունեցող խնդրի մէջ։ Նորագոյն դիտողութիւնները ցոյց տուին, որ կոմի ծաղկի պատուաստումը կամ բոլորովին չէ նախապայմանում իսկական ծաղկից, կամ եթէ նախապայմանում էլ է, նրա ներգործութիւնը անում մէկ կամ երկու ամիս։ Բայց այս բանի ապացոյցները անդակաս էին և մեր դարի բանկրներում, և եթէ դիտակները անհերքելի չաստգոյութեամբ յայտարարած չը լինէին, երբ թէ կոմի ծաղկի պատուաստումը փրկում է ընդմիշտ իսկական ծաղկից, անտարակոյս այս կարծիքի մոլար և սխալ լինելը ապացուցող փաստերը կը յայտնանակէին պատուաստման պաշտպաններին և կը ստիպէին նրանց փոխել իրանց կարծիքը, ու տասնեհինգերորդ դարը ազատուած կը լինէր իր անուանի կարող մէկ աւելորդ իրողութիւնից։

Դժբախտաբար, որպէս բժշկութեան, նոյնպէս և օրէնքի պարագայութիւնները շատ շուտով և շատերով հանդիպեցին Զեններին ներած հիմունքների անդրդելիութիւնը և այն էլ մի այնպիսի եղանակով, որը այլոց թոյլ չէր տալիս խնդիրը նորից վերաքննելու։ 1802 թ-ին պատգամաւորների պարապարը, հիմնուելով իր յանձնաժողովի զեկուցման և Լոնդոնի բարձրագոյն բժիշկների կարծիքների վրայ,—որոշեց տալ Զեններին, իրրև ազգային նուէր, 10,000 ֆունտ ստերլինգ։ Այս պատճառով, երբ հրատարակուեցին մի շարք փաստեր, որոնք ապացուցում էին, որ կոմի ծաղկի պատուաստումը չէ նախապայմանում իսկական ծաղկից, արդէն ուշ էր արած սխալը ուղղել, որովհետև հանրածանոթ երևոյթ է, որ ամէն մի մասնագիտութեան մարդիկ հեշտ չեն խոստովանում իրանց սխալները, որպէս և օրէնսդիրները հեշտ չեն համաձայնում այն բանի հետ, թէ իրանք հատարակական փողերը չարաչար են ուռանց բաւականաչափ հիմք ունենալու։

Բժիշկները սկսեցին պատուաստել, Զենները այլոց մի քանի անգամ մեծ-մեծ գումարներ ստացաւ պարատից։ 1853 թ-ին պատուաստումը պարտադիր դառաւ ուղղանքի պատժով, իսկ 1867-ին արդէն կատարւում էր զորքերի օգնութեամբ։

Առաջքան պարզենք, թէ ինչի մէջն է ծաղկի պատուաստման թերութիւնը, պէտք է ասենք, որ սխալ է այն կարծիքը, իբր թէ այս խնդրում նշանակութիւն ունի միայն բժիշկների կարծիքը։ Նրանք այստեղ չահագրգռուած կողմն են, ուստի չեն կարող անաչառ լինել։ Որպէսզի իմացուի, թէ ինչ յարաբերութիւն կայ պատուաստման և ծաղկի մէջ, պէտք է ճիշտ ցուցա-

կարդումն հիւանդութեան և մահուան բոլոր դէպքերը եղակի և կրկնակի պատուաստումներից յետոյ։ Եւ երբ այս դէպքերը ցուցակագրուած կը լինեն, նրանց մէջ եղած ճիշտ յարաբերութիւնը որոշելը ոչ թէ բժշկի, այլ վիճակագրի գործն է։ Առհասարակ փորձը ցոյց է տուել, որ բժիշկները վատ վիճակագրողներ են և մի առանձին ընդունակութիւն ունեն թիւերը խոնջեցնելու։ Մեր հարիւրամեակի առաջին տարիներից սկսած մինչև մեր ժամանակները վիճակագրական տեղեկութիւնների մէջ չարունակ տեսնում ենք ամենամեծ և ամենաակներև սխալներ, այն էլ միշտ յօդուտ պատուաստման։ Եւ երբ մենք մտածում ենք, որ այդ սխալ հաշիւները, դիտաւորուած աղաւաղումները և ինքսի բացասումները տարածուած էին ամբողջ հարիւրամեակի ընթացքում, որ նրանց վրայ էին հիմնուած պատժական օրէնքները, որ աղքատների տները յաճախ աւերում էին ոստիկանութեան և դատաստանի ձեռքով, և նրանց ընակիչները ձգում էին բանտերը, որ նրանց հետ վարում էին, որպէս յանցաւորների հետ, որ այժմ ընդունուած պաշտօնական վիճակագրութեանը նայելով մօտ 1000 երեխայ սպանուել է պատուաստումից վերջին 20 տարիների ընթացքում և մի անյայտ, բայց անկասկած աւելի մեծ թիւ այլանդակուել է ընդմիշտ,—մենք այն եզրակացութեանը կը գանք, որ նրանք, ովքեր պատասխանատու են այսպիսի թերհամիտ մտածողութիւնների և այստեղից ծագած սարսափելի հետևանքների համար, անհոգութեան և տգիտութեան համար,—յանցանք են գործել աղատութեան, առողջութեան և մարդկութեան դէմ։ Եւ մի քանի տարուց յետոյ այս բանը անտարակոյս կը ճանաչուի տասնեիններորդ դարի քաղաքակրթութեան ամենամօթալի բներից մէկը։

Այժմ կ'ապացուցենք պատուաստման անօգուտ լինելը մեր ունեցած ամենաճիշտ և ամենալիակատար վիճակագրական տեղեկութիւնների օգնութեամբ*)։ Հիւանդանոցների տուած թիւերը ցոյց են տալիս, որ այժմ ծաղկից մեռնողների հաշուով մեռնում է հարիւրից 14-ից մինչև 18-ը, այնքան, որքան մեռնում էր անցեալ դարում։ Ինչ վերաբերում է չը պատուաստուածներին, սրանցից այժմ մեռնում է մօտաւորապէս կէսը, մինչդեռ անցեալ դարում մեռնում էր մէկ հինգերորդականը։ Բնականաբար հարց է ծագում, ինչպէս է որ չը պատուաստուածներից այժմ աւելի են մեռնում,—չը նայելով առողջապահիկ պայմանների բարե-

*) Հեղինակը մէջ է բերում մի շարք թիւեր և համեմատական աղիւսակներ։
Ծ. Թ.

փոխուելու և բժշկութեան եղանակների կատարելագործուելուն։ Այս հանգամանքը բացատրում է նրանով, որ պատուաստ չունեցողները միշտ պատկանում են ազգաբնակութեան ամենաչքաւոր դասին, և նոյնպէս նրանով, որ դրանք ընդհանրապէս յանցաւորներ, թափառաշրջիկներ և առհասարակ ամեն տեսակ աննամակաց մարդիկ են լինում։ Անպատուաստների թուումն են նաև այնպիսի մանուկներ, որոնց պատուաստումը յետաձգուած է եղել թուրութեան կամ այլ հիւանդութիւնների պատճառով, կամ որոնք որոշեալ պատուաստական հասակից շատ փոքր են եղել։ Այսպիսով պատուաստից զրկուածները կազմում են մի դասակարգ, որը առանձնապէս արամադիր է ենթարկուելու ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւններին, խմիջի այլոց և ծաղկին։

Գալով ծաղկով հիւանդացողներին, Լոնդոնի հիւանդանոցների տուած պաշտօնական թուերը վկայում են, որ դրանցից 90% և աւելին եղել է պատուաստուած։ Ենկատի առնելով, որ Լոնդոնի ազգաբնակութեան պատուաստուած մասը կազմում է 90%-ից ոչ աւելի, նոյնիսկ պակաս, տեսնում ենք, որ պատուաստ չունեցողները աւելի են ենթարկուած հիւանդութիւններին, և որ ծաղկի պատուաստումը ոչ մի ներգործութիւն չունի։ Արդէն տեսանք, որ մահացութիւնը այդ հիւանդանոցներում բոլորովին նոյնն է, ինչպէս եղել է անցեալ դարում, և այս երկու փաստերը, միասին վերցրած, գրեթէ անպայման ճշմարիտ են դարձնում այն եզրակացութիւնը, որ ծաղկի պատուաստումը ոչ մէկ անգամ չէ փրկել ոչ մի մարդկային կեանք։

Փոխենք այժմ մահացութիւնն ընդհանրապէս և ծաղկի ունեցած յարաբերութիւնը նրա հետ։ Սկսենք Լոնդոնից։ Աչքի անցնելով թուերը, նկատում ենք, որ անցեալ դարում, 1760 թուից սկսած մինչև 1800 թ., ծաղիկը չարունակ անընդհատաբար թուլանում էր, այնպէս որ վերջը միլիոն բնակիչների վրայ 1,000 մարդ ծաղկից պակաս էր մեռնում։ Այնուհետև 1800-ից մինչև 1834 թ. ծաղիկ հիւանդութիւնից մեռնողների թիւը չարունակում էր քչանալ, թէև շատ չնչին չափով։ Իսկ 1838 թուի սարսափելի համաճարակից յետոյ մինչև 1885 թիւը մահացութիւնը գրեթէ անփոփոխ է մնում, սակայն 1886-ից մեռնողների թիւը արագ նուազում է և աննման մեծութեան է հասնում, այս տեսում է մինչև այսօր։ Պատուաստման պաշտպանները ուզում են ապացուցել, իբր թէ 1800 թուից սկսած մահացու-

թեան քշանալը տեղի է ունեցել պատուաստման տարածուելու շնորհիւ։ Բայց այս եզրակացութիւնը ոչ միայն չէ հաստատւում դիտնական արժէք ունեցող որեւէ աղացոյցով, այլև հերքւում է բազմաթիւ կարևոր փաստերով։ Նախ և առաջ՝ մեր դարի սկզբում նկատուած մահացութեան քշանալը ակներև շարունակութիւն է նախորդ դարում նկատուած երևոյթի, և այն պատճառները, որոնք ազդում էին 18-րդ դարի վերջին 40 տարիների ընթացքում մահացութեան ընդհանրապէս քշանալու վրայ, կարող էին նոյնպէս ազդել յետոյ էլ, 19-րդ դարի սկզբներում։ Երկրորդ՝ մեր դարի առաջին կիսում պատուաստումը համեմատաբար սակաւ էր գործ դրւում և շատ անկատար էր։ Միայն 1854-ից նա պարտադիր, ուստի և գրեթէ ընդհանուր դառաւ, սակայն, չը նայելով այս բանին, հէնց այդ 1854-ից մինչև 1884-ը գրեթէ բոլորովին չէ կարելի նկատել ծաղկից առաջացած մահացութեան նուազում, և ծաղկի ամենասարսափելի համաճարակները այդ շրջանի միջին ժամանակներումն են տեղի ունեցել։ Միւս կողմից, 1886—1896 թ. թ., երբ Լոնդոնում պատուաստումը ամենից աւելի էր անվոյթ թողնուած, մահացութիւնը եղել է ամենաչնչին։ Բայց ամենալաւ ապացոյցը, թէ պատուաստումը չէ ազդում ծաղկի պակասելու վրայ, այն անհերքելի երևոյթն է, որ ծաղկի հետ միաժամանակ պակասում և աւելանում էին և ուրիշ վարակիչ հիւանդութիւնները, որոնք թուլանում կամ ուժեղանում էին անտարակոյս առողջապահական պայմանների բարեփոխուելուց կամ վատանալուց։ Այս վարակիչ հիւանդութիւններն էլ սկսել էին պակասել արդէն 18-րդ դարի վերջին քառասնամեակից, և այսպէս շարունակաբար թուլացել են և մեր դարի սկզբներում։ Ուղիղ է, 1838 թուից յետոյ ծաղիկն ու կարմրուկը համեմատաբար աւելի քիչ էին թուլանում կամ ուժեղանում, քան թէ ուրիշ վարակիչ հիւանդութիւնները, բայց այս հանգամանքը ցոյց է տալիս միայն, որ այդ ժամանակ դեռ չէին գտնուած այն յատուկ միջոցները, որոնք ազդում են այդ ախտերի վրայ, իսկ 1886-ից յետոյ սկսեցին ծաղկով հիւանդացածներին կատարելապէս առանձնացնել, և զարմանալի հետևանքներ ստացուեցին. հաստատուեց, որ այս միջոցը միակ ճշմարիտ միջոցն է, որ իրօք ներգործում է այդ հիւանդութեան վրայ, ինչպէս ցոյց տուեց Լէյչեստէր քաղաքի փորձը։ Մենք այստեղ չենք նկարագրի այն բարելաւումները, որ տեղի են ունեցել վերջին դարում Լոնդոնի առողջապահական պայմանների մէջ *)։ Բայց բոլոր այն անձանց համար, ո-

*) Հեղինակը մի առանձին յաւելուած է նուիրում այս հարցին։ Ծ. Թ.

բանը գործը ամեն կողմից քննել են, շատ պարզ է, որ Լոնդոնի առողջապահական պայմանների բարելավումը և վերջին դարում նկատուած՝ վարակիչ հիւանդութիւնների ու ծաղկի պակասելը սերնդեն կապ ունեն իրար հետ։

Լոնդոնի սահմաններից դուրս գնալով Բրիտանիա, տեսնում ենք նոյն երևոյթը, որ ծաղկի և ուրիշ վարակիչ հիւանդութիւնների պակասելը զուգընթացաբար է տեղի ունեցել, միայն թէ ոչ այնչափ ծաղկից, այնպէս և վարակիչ հիւանդութիւններից այնտեղ աւելի քիչ են մեռել, քան թէ Լոնդոնում։ Այս բանը բացատրում է նրանով, որ այնտեղ աւելի է համեմատաբար առողջ գիւղական պայմանների մէջ ապրող մարդկանց թիւը։ Եթէ գլխաւոր պատճառը պատաւատում մը լինէր, ինչպիսի՝ կամ ոչ մի տարբերութիւն չէր լինի ժայրաբաղաքի ու գաւառի մահացութեան մէջ, կամ շատ չնչին կը լինէր։ Բայց այստեղ գլխաւոր պատճառն է ապրարնակութեան համեմատական խտութիւնը, որը ազդում է ծաղկից առաջացած մահացութեան վրայ բոլորովին այնպէս, ինչպէս որ ազդում է ուրիշ վարակիչ հիւանդութիւններից առաջացած մահացութեան վրայ։ Մասնաւորապէս 1881 թուից Բրիտանիայումն էլ թուլացել է պատաւատում մը, և այնուամենայնիւ ծաղկի նուազումը օրէցօր աճում է, և ծաղիկը այնպէս անհետ է դառնում, որպէս երբէք առաջներում։

Աւելի հարուստ, բազմամարդ և բարեկեցիկ Շոտլանդիան տալիս է ծաղկին աւելի շատ զոհեր, քան թէ միշտ քաղցած և սակաւարնակ Իրլանդիան։ Ծաղկից և վարակիչ հիւանդութիւններից մեռնողների թիւը Շոտլանդիայում գրեթէ երկու անգամ աւելի է, քան թէ Իրլանդիայում։ Այս երևոյթը պարզ բացատրութիւն ունի։ Առողջապահութեան հաստատուած վարչութիւնը ամենաանվիճելին այն է, որ ապրարնակութեան համեմատական խտութիւնը ազդում է հիւանդութիւնների վրայ, մանաւանդ վարակիչ հիւանդութիւնների վրայ, աւելի, քան թէ մի օրէնք ուրիշ պատճառ։ Ապրարնակութեան խտութիւնը ազդում է գլխաւորապէս օդի մաքրութեան, ասել է՝ արիւնի զտութեան վրայ. իսկ եթէ յիշենք լինենք, որ շնչառութիւնը մեր օրգանիզմի ամենակենդանական և ամենամշտական պաշտօնն է, որովհետև տեղի է ունենում անընդհատաբար մեր կեանքի ամեն րոպէում,—որ օդը մտնում է մարմնի ամենանուրբ գործարանը, թոքերը, և որ վերջապէս՝ նա անմիջապէս ներգործում է արիւնի վրայ և այդպիսով ազդում է ամբողջ օրգանիզմի վրայ, մենք կը հասկանանք, թէ որչափ անհրաժեշտ է, որ մեզ շրջապատող օդը կարելիին չափ ազատ լինի վարակիչ տարրերից, ո-

բոնք առաջանում են թէ ուրիշ մարդկանց հնչառութիւնից, թէ գործարանական մարմինների նեխումից և թէ զանազան հիւանդութիւնների սաղմներից։

Այս հանգամանքը աչքի առաջ ունենալով համեմատենք Իրլանդիայի, Շոտլանդիայի և Անգլիայի մահացութիւնը։ Իրլանդիայում միայն ազգաբնակութեան 11%-ն է ապրում քաղաքներում, Շոտլանդիայում 30%, իսկ Բրիտանիայում 54%։ Վարակիչ հիւանդութիւններից առաջացած մահացութիւնը այդ երկիրներում զրեթէ նոյն յարաբերական թիւերն է տալիս. ծաղկից ամենից շատ մեռնում են Լոնդոնում, Անգլիայում, Շոտլանդիայում, և ապա միայն Իրլանդիայում։ Այստեղ ակներև է պատճառն ու հետևանքը. աւելի խիտ ազգաբնակութիւնը առաջացնում է և աւելի մահացութիւն։ Բայց ամենանշանաւոր փաստն այստեղ այն է, որ պատուաստումը ամենից աւելի կատարեալ է եղել հետեւեալ յաջորդականութեամբ—Լոնդոնում,—Անգլիայում,—Շոտլանդիայում,—Իրլանդիայում։ Այս դասակարգութիւնը համապատասխանում է թէ ազգաբնակութեան խտութեանը և թէ մահացութեան մեծութեանը, և ցոյց է տալիս, որ պատուաստումը կապ չունի ծաղկի պակասելուն հետ։

Նոյն երևոյթը ապացուցւում է, քննելով Շվեդիայի, Պրուսիայի, Բաւարիայի վիճակագրական տեղեկութիւնները. առանց տեղ ամենախիստ ընդհանրացած պատուաստումը չէ պակասեցրել ծաղկից մեռնողների թիւը, իսկ պակասելը կախուած է եղել ազգաբնակութեան խտութիւնից և առհասարակ առողջապահական պայմաններից։

Նրանք, որոնք չեն հաւատում պատուաստման նախապաշտպանողական յատկութեանը, ձեռքի տակ ունեն երկու մեծ փորձ, որոնք ահագին ծաւալով հաստատում են կովի ծաղկի պատուաստման անզօր լինելը։ Մէկն է, Լէյչեստեր քաղաքի օրինակը, ուր արդէն քսան տարի է՝ ծաղկի պատուաստումը թողել են, այնպէս որ այժմ այնտեղ ծաղիկ չեն կտրում. միւսը՝ անգլիական ցամաքային և ծովային զօրքերի օրինակն է, ուր զարիս վերջին քառորդում ամեն մի նորակոչ կրկին անգամ պատուաստուել է, նոյնիսկ եթէ առաջուց մէկ անգամ պատուաստուած է եղել կամ նոյնիսկ հիւանդացած է եղել իսկական ծաղկով։ Առաջին դէպքում ունենք 200 հազարից բաղկացած մի ազգաբնակութիւն, որը ծաղկից բոլորովին պաշտպանուած չէ եղել պատուաստման օգնութեամբ և որը, պատուաստի կողնակիցների ասելովը, ամենաարբանեկի կերպով պիտի տուժէր

ծաղկի համաճարակից, իսկ միւս դէպքում ունենք նոյնպէս մօտ 220 հազար մարդուց բաղկացած բազմութիւն, որը, բոլոր բժշկական հեղինակութիւնների հաւատացնելովը, որչափ միայն հնարաւոր է՝ նախապատրաստուած է եղել պատուաստման ընդդէմ, և որի մէջ, ասել է, ծաղկով հիւանդանալու դէպքերը պիտի չափազանց սակաւ լինէին, իսկ այդ հիւանդութիւնից մեռնելը՝ գրեթէ անծանօթ։ Տեսնենք, ինչ է իրօք տեղի ունեցել այդ երկու դէպքերում։

Լէյչեստերում 1868-ից մինչև 1872 թուականը, երբ ծաղկի պատուաստումը բարձրագոյն կէտին էր հասել, այդ հիւանդութիւնից ամենից շատ էին մեռնում. նախորդ չորսնում, 1852 թուից մինչև 1860-ը, այդ թիւը աւելի քիչ էր, որովհետև առողջապահական բարեփոխութիւններ էին մտցրուած քաղաքում. բայց պատուաստման պարտադիր դառնալը բազմացրեց ծաղկից մեռնող երեխաների թիւը, մինչև որ ծաղկի պատուաստումը չը թողեցին։ Այս հանգամանքները ցոյց են տալիս, որ պատուաստումը ոչ միայն չէ պակասեցնում մահուան դէպքերը, այլ ընդհակառակը՝ աւելացնում է։ 1872 թուին Լէյչեստերը հրաժարուեց պարտադիր պատուաստումից, այնպէս որ 1894 թուին տասը հազար բնակիչներից միայն 7-ն էր ծաղկի կարել, և այնուամենայնիւ ծաղկով հիւանդացողների և մեռնողների թիւը արագ նուազեց։ Համեմատեանք Բիրմինհամ և Ղոբենպատն քաղաքների հետ, ուր զարմանալի կատարելութեան է հասել պատուաստումը։ Վերջին 1892—1893 թ. թ. ծաղկի համաճարակը հետեւեալ զոհերն է ունեցել 10 հազար բնակիչների վրայ.

Լէյչեստերում—1,1 մահացու դէպք.
Բիրմինհամում—5.
Ղոբենպատնում—11,8։

Այսինքն՝ տեղից տեղի աւելի վնասուել է ոչ թէ վատ, այլ լաւ պատուաստում ունեցող քաղաքը։ Մինչև 1884 թուականը հիւանդութիւնը երեւցել է Լէյչեստերում բան անգամ և տասնեակներով անգամ վերջին համաճարակի ժամանակ։ Բժիշկները հաւատացած էին, որ հէնց որ այդ քաղաքում ծաղիկը երեւաց, պիտի տարածուի հրդեհի արագութեամբ, բայց այդ կարծիքին հակառակ՝ հիւանդութիւնը այնտեղ աւելի քիչ զոհեր էր տանում, քան թէ Անգլիայի որեւէ ուրիշ քաղաքում. պատճառը միայն այն է, որ Լէյչեստերը միշտ առանձին խնամքով հոգ է տարել իր առողջապահական պայմանների բարելաւելու և հիւանդներին առանձնացնելու վրայ։

Ցամաքային եւ ծովային զօրքը։ Սկսած 1860 թուից

ցամաքային զօրքի մէջ, իսկ 1873-ից սկսած ծովային զօրքի մէջ բոլոր ծառայող անդլիացիներին և օտարազգիներին առանց բացառութեան կրկին անգամ պատուաստում էր ծաղիկը։ Այդ ժամանակամիջոցում միշտ և անընդհատ բարեփոխուել են զինուորների առողջապահական պայմանները։ Այնուամենայնիւ ծաղիկը բացառիկ դէպք չէ եղել թէ ցամաքային և թէ ծովային զօրքի մէջ, և մահացութիւնը բաւականին մեծ է եղել, միայն թէ շարունակ նկատուել է, որ ցամաքային զինուորները աւելի են մեռել ծաղկից, քան թէ ծովայինները։ Պատճառներից առաջինը այն է, որ նաւաստիները օրուայ մեծ մասը անց են կացնում բացօդեայ և այն էլ ծովի վրայ, որը մաքրութեան և առողջապահութեան կողմից ամենաիդէալականն է, իսկ ցամաքային զինուորները ապրում են բանակներում կամ զօրանոցներում, յաճախ մեծ քաղաքների մօտ կամ նոյնիսկ նրանց մէջ, այսինքն ապականուած օդի մէջ։ Միւս պատճառն այն է, որ զինուորները ցամաքի վրայ աւելի են ենթարկուած վարակուելու վտանգին, քան թէ նաւաստիները ծովի վրայ։

Եթէ համեմատելու լինենք մահացութիւնը զօրքի մէջ 1864-ից մինչև 1894 թուականը Իրլանդիայի մահացութեան հետ, կը տեսնենք, որ տարեկան մէկ միլիոնից մեռել են

ցամաքային և ծովային զօրքի մէջ—64,3,

Իրլանդիայում—65,8։

Ասել է թէ՝ աւելի քիչ նախապաշտպանուած և քիչ ապահովուած երկերը իրօք գրեթէ նոյնպիսի մահացութիւն է ունեցել ծաղիկ հիւանդութիւնից, ինչպիսին որ ծովային և ցամաքային զօրքը միասին վերցրած։

Համեմատենք այժմ Լէյչեստերի հետ։ 1873-ից մինչև 1894 թուականը մէկ միլիոնից մեռել են

ցամաքային զօրքի մէջ—37 հոգի,

ծովային զօրքի մէջ—36,8,

Լէյչեստերում—14,4։

Այսպիսով պարզ է դառնում, որ ոչ նաւաստիները, ոչ էլ ցամաքային զինուորները չունեն այն անմատչելիութիւնը ծաղկի նկատմամբ, որը իբր թէ տալիս է կովի ծաղկի պատուաստումը, և վարակուելու վտանգին ենթարկուած ժամանակ նոյնքան, իսկ երբեմն աւելի են վնասուում, քան թէ ուրիշ մարդիկ։ Վերջին երևոյթը շատ հասկանալի է։ Մեր ձեռքի տակ ունենք Բերնի համալսարանի՝ առողջապահութեան պրոֆեսսոր յայտնի դ-ր Ադոլֆ Ֆոխտի զարմանալի լիակատար աշխատութիւնը, ուր բազմաթիւ փաստերի և ապացոյցների հիման վրայ հեղինակը, ի միջի այլոց, հաստատում է, որ պատուաստումը ոչ թէ նա-

խոպաշապանում է ծոցկով վարակելուց, այլ ուելի սրամտագիր է դարձնում վարակելու։ Դրբի առաջին գլխի վերաբերութիւնն է. «Ծոցկով առաջին անգամ վարակելը չէ պահպանում երկրորդ անգամ վարակելուց», որտեղ գ-ը Ֆոխար ճիշտ թուերով ապացուցում է, որ հաւանականութեան օրէնքի հիման վրայ, ծոցկով հիւանդացած 1000 հոգուց միայն տասը պիտի կարողանար կրկին նոյն ցաւով հիւանդանալ, մինչդեռ հիւանդանում են իրար ետեւ և վերջ-պատուաստում է այս թիւը մեծացնում. միւս կողմից, երկրորդ անգամ հիւանդացողներից ուելի շատերն են մեռնում։ Բացի այդ, հեղինակաւոր բժիշկներից շատերը նկատել են, որ ով որ առաջին անգամ տարաբաղել է ծոցկի ծանր ուեսակով, ուելի յաճախ է վարակւում երկրորդ անգամ, այսինքն, բոլորովին հակառակն է ուեղի ունենում, քան եթէ առաջին անգամ հիւանդանալը իրար նախապաշտպանելիս լինէր երկրորդ անգամ հիւանդանալուց։ Ֆոխար պնդում է, որ ծոցկիը անմիջական կապ ունի ապդարնակութեան խառնեան և այսուհետեւ ծագող առողջապահական պայմանների հետ։

Այս ամենը ի նկատի առնելով ապագայ սերունդը անկասկած ծոցկի պատուաստումը կը դասի մեր ազգ և նախապաշարուած դարի մեծագոյն սխալների շարքը և նրա սրամտագիր դարձնելը կը ճանաչի որպէս մի ամօթալի բիծ մեր առհասարակ լուսաւորուած օրէնսդրութեան մէջ։ Դիմում եմ մեր օրէնսդիրներին, խնդրելով ուշադրութեան առնել այն պատասխանատուութիւնը, որ նրանց վրայ է ընկնում, իրրև անդլիական ազգի ապատութեան պահապանների վրայ, և պահանջել, որ պատուաստման պարտադիր լինելու օրէնքը անյապաղ վերացուի։ Այդ օրէնքը հիմնովին հակասում է անձնական ապատութեանն ու ընտանիքի սրբութեանը և, բոլորովին դանց առնելով առողջապահական դիտութեան եզրակացութիւնները, այն սարսափելի մոլորութիւններից մէկն է, որոնք իրանց լայնածաւալ հետեւանքներով ամենամեծ յանցանքներից էլ վատ են։ *)

---

*) Հեղինակի խիստ յարձակումները ծոցկի պատուաստման դէմ պիտի մասամբ բացատրել այն անդութութեամբ, որով անդլիական կառավարութիւնը պահանջում էր ամեն մի անդլիացուց ծոցկի պատուաստում։ Միւս կողմից, պատուաստման կողմնակիցներն էլ սկսել են ուելի համեստ կարծիքներ յայտնել այդ միջոցի ուսական ազդեցութեան մասին։ Արդէն ընդհանրացած է այն համոզմունքը, որ յամենայն դէպս պատուաստը չէ պաշտպանում մարդուն մինչև մահ, և հարկաւոր է

XIX

ՄԻԼԻՏԱՐԻՍՄԸ ՈՐՊԷՍ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊՏՏՈՒՀՈՒՍ

1. Ցանցանքը եւ պատիժը.

Ներկայ հարիւրամեակի առաջին կէսը առաջ բերեց բազմաթիւ բարի փորձեր, որոնք այնուհետեւ զարգացում չունեցան, և բազմաթիւ գեղեցիկ յոյսեր, որոնց չէր վիճակուած իրականանալ։

Սրբ Սամուէլ Ռոմիլիի և սրբ Ջեմս Մակինտոշի նման նորոգիչների ջանքերով քրէական օրէնքների մէջ արած մեծ բարեփոխութիւններից յետոյ ոչ մի համապատասխան փոփոխութիւն տեղի չունեցաւ անգլիական պատժական սիստեմի մէջ, որը մինչեւ այսօր էլ մնում է անգութ, անարդար և հակասում է արդէն ամենքից ճանաչուած սկզբունքներին, այն սկզբունքներին, որոնք պիտի պատիժների ղեկավարը լինէին քաղաքակրթուած ժողովուրդների մէջ։ Դարիս սկզբում Անգլիայում հաշուում էին մօտ քսան և հինգ տեսակ յանցանքներ, որոնց համար նշանակւում էր մահուան պատիժ, օրինակ՝ գողութիւնը կողպէք կամ տուն կոտրելով, 40 շիլլինգից (մօտաւորապէս 20 բուբլուց) աւելի գումարի գողութիւնը տնից կամ խանութից, կեղծիքը, դրամանենգութիւնը, հին դրոշմանշանների գործածութիւնը մաղերի փոշու և օծանելիքների սրուակների վրայ,

---

համարւում որոշ ժամանակամիջոցներում կրկնել պատուաստումը։ Միայն թէ մի քանիսը այս ժամանակամիջոցը երկարացնում են մինչեւ 10 և աւելի տարի, միւսները՝ կարճացնում են մինչեւ 3—4 տարի, նոյնիսկ մի քանի ամիս։ Այս է պատճառը, որ ժամանակակից բժշկութիւնը սկսել է աւելի մեծ նշանակութիւն տալ առողջապահական պայմանների բարեփոխութեանը և հիւանդների առանձնացմանը, քանթէ պատուաստին։ Բայց այնուամենայնիւ, կլինիկական (հիւանդոցներում) փորձերը դեռ կատարելապէս չեն հերքում պատուաստման օգտակար լինելը, և Ջեննների անունը դեռ դասւում է մարդկութեան բարերարների շարքը։ Հաւանական է, որ ճշմարտութիւնը, որպէս միշտ, մէջտեղն է. այն է, որ առողջապահական պայմանները անկասկած տագնի նշանակութիւն ունեն ծաղկի դադարման համար, իսկ միւս կողմից՝ պատուաստումն էլ, գոնէ կարճատեւ ժամանակ ներգործում է մարդուս մարմնի վրայ և պաշտպանում է նրան վարակուելուց։

(Տես այս հարցի մասին դ-ր Albert Eulenburg-ի «Բժշկական գիտութիւնների ռէալ-հանրագիտարանը», հատոր XIV)։

Ե. Թ.

ոչխարների և ձիերի դպրութիւնը և ուրիշ այս տեսակները։ Բոլոր այս համեմատարար անհայտ յանցանքների համար նշանակուած մահուան պատիժը վերացուեց ներկայ դարի կէսից մի փոքր առաջ. մեր բանտերը բուսականին մաքրուեցին ու կարգի բերան, յանցաւորների աստիճանը Տասմանիա և ուրիշ աւտարալիական գաղութները, իր ամբողջ անպիտանութեամբ և դեգերումներով, ոչնչացաւ։ Բայց այս կէսի վրայ էլ կանգնեցին։ Մեր վերաբերմունքը դէպի յանցաւորները թէև արտաքուստ գաղարեց առաջուայ պէս անողորմ լինելուց, սակայն առաջուայ պէս այժմ էլ հակասում է պատիժն ուղղութիւն տուող սկզբունքներին. յանցաւորներին տուած պատիժների ֆիզիկական և մասնաւոր հետեւանքները նոյնչափ սպանիչ են մնում նրանց առողջութեան համար, որչափ որ էին անցեալ դարի հնացած, վատ սիստեմի օրով։

Դեռ Պլատոնը և ուրիշ դասական հեղինակները այն բոկզրանքն էին քարոզում, որով ամեն պատժի գլխաւոր նպատակը պիտի լինի յանցաւորի ուղղութիւնը։ Բեկկարիան անցեալ դարում նոյն հայեացքն ունէր ճշմարիտ բանական պատժի մասին, բոլոր ժամանակակից հետախոյզներն ու մարդասէրները ճանաչում են այդ հայեացքի ճշմարտութիւնը, և այնուամենայնիւ ամբողջ հարիւրամեակի ընթացքում մենք ոչ մի քայլ չենք արել այդ ուղղութեամբ, գոնէ չափահաս յանցաւորների հետ վարուելու եղանակի մէջ։ Հնաւանդ երկաթէ շղթաները և ճնշիչ զինուորական կարգապահութիւնը, որից ամենից յաճախ և ամենից շատ տուժում են լաւագոյն բնաւորութիւնները, մինչև այսօր էլ յատուկ են մեր պատժական սիստեմին, որը, ընդհանուրի համոզմամբ, լաւ մարդկանց վատ է դարձնում, իսկ վատերին՝ վատագոյն, և անկարելի է անում, որ պատահաբար յանցանք կատարած մարդը խոյս տայ յանցաւոր կեանքից։ Զը կայ ոչ մի դասակարգութիւն յանցաւորների մէջ, գործ չէ դրւում ոչ մի մարդասիրական սկզբունք, չէ անւում ոչ մի փորձ բնաւորութիւններն ուղղելու, չէ տրւում ոչ մի նախապատրաստութիւն ազնիւ կեանք վարելու, ոչ մի միջոց, որ հնարաւորութիւն տար յանցաւորին ազնիւ աշխատանքով ապրելու բանտից դուրս գալուց յետոյ։ Քանի-քանի անգամ պատժի ենթարկուած կրթուած մարդիկ ցոյց են տուել մեզ, թէ ինչի նման է այդ բանտային սարկութիւնը։ Բոլորն էլ ասում են, որ այդ մի դժոխք է երկրիս երեսին, որ դրա նպատակն է յանցաւորների մէջ ամեն մարդկային զգացմունք և ամեն վսեմ ձգտում ճնշելու ցանկութիւնը, որ դա աշխարհին վերադարձնում է պատիժ կրած մարդկանց մեծագոյն մասը աւելի փը-

չայած բնաւորութիւններով և աւելի անընդունակ՝ աղնիւ կեանք վարելու, քան թէ մինչև նրանց բանտ մտնելը։ Սիստեմ, որ վերին աստիճանի հակաքրիստոնէական է, վերին աստիճանի հակասում է քաղաքակրթութեանը, փիլիսոփայութեանը, առողջ բանականութեանը, և այնուամենայնիւ մնում է լիապէս տասնեվեցերորդ դարի այս վերջին տարիներում. ոչ կառավարութիւնները, ոչ օրէնսդիրները ըստ երևոյթին չեն էլ մտածում, որ այդ գործը շատ կարևոր մի գործ է, որ արժէ, որպէսզի նա ուսումնասիրուի և հիմնովին, արմատից բարեփոխուի։

Պէտք է խոստովանուենք վերջապէս, որ մեր բանտային սիստեմը տասնեվեցերորդ դարի գոված քաղաքակրթութեան ամենասարսափելի արատներից մէկն է։

Նեղապարների հետ մեր ունեցած վարուողութիւնն էլ պահանջում է բաւականաչափ բարեփոխութիւն։ Որպէս հասարակական, նոյնպէս և մասնաւոր ապաստարաններում՝ ուղիղ է՝ նրանց հետ սկսել են աւելի լաւ վարուել, և այժմ գործը այնքան լաւ է դրուած, որքան թոյլ է տալիս դնել ընդարձակ ապաստարանների սիստեմը, երբ հնարաւորութիւն չը կայ նրպատակայարմար կերպով դասաւորելու հիւանդներին, առանձնացնելու նրանց և գործադրելու նրանց վերաբերմամբ անհատական բժշկութեան եղանակը, որը անպայման կերպով անհրաժեշտ է յաջողութիւն ունենալու համար։ Բայց ամենագլխաւոր շարիքը մասնաւոր խնամատարների մէջն է, որոնք հիմնուում են առևտրական նպատակներով, և նոյնպէս այն սիստեմի մէջն է, որի հիման վրայ որևէ աղգականի կամ ծանօթի կողմից հրաւիրուած երկու բժիշկների վկայութիւնը բաւական է, որ մէկը խելառ ճանաչուի և բռնի ոյժով ուղարկուի մասնաւոր ապաստարաններից որևէ մէկը,—առանց հրապարակական քննութեան և յաճախ առանց մերձաւոր աղգականների կամ այն բարեկամների համաձայնութեան, որոնք ուրիշներից աւելի են ճանաչում այդ մարդու առողջութեան վիճակը։ Ամենքին լաւ են յայտնի այն դէպքերը, երբ միստրիս Վելդոն և միստրիս Լովէ, այս բոլորովին առողջ կանայք, այդպէս վարուեցին ապաստարաններում և կարող էին ճիշտ որ խելագարուել, քանի որ նստեցրած էին ամեն տեսակ խելագուրկ հիւանդներով լցուած ապաստարանում։ Այս երկու կանանց ապաստարան ձգեցին նրա համար, որ «սպիրիտուէիզ» էին, այսինքն՝ այն հայեացքների տէր էին, որոնց հետևում են Վիլլեամ Կրուկսը, կոմս Կրոֆորդը, Ջերոլդ Մասսէյ, և որ ունեմ ես ինքս էլ վերջին երեսուն տարիների ընթացքում, և որոնց համար—եթէ հետևողականութեամբ վարուելու լինենք,—մեզ և ուրիշ հարիւրաւորնե-

բին էլ, մեզ պէս առողջ մարդկանց, հարկաւոր պիտի լինէր փակած պահել խելագարների նման։ Այդ կանանց արտաքին բնական թիւնները ու լիակատար առողջութիւնը, ինչպէս և ազգեցիկ բարեկամների միջամտութիւնը թոյլ չը տուին բնդմիշտ կապած պահել նրանց, բայց հաւատացած ենք, որ կան բազմաթիւ պակաս բնական անձնասրութիւններ, որոնք այժմ էլ անգութ և անարդար կերպով զրկուած են ազատութիւնից և մի քանի դէպքերում երբեմն խելքը կորցնում են սարսափելի միջոցների մէջ։ Թէ որչափ վտանգաւոր է հաւատ ընծայել բացատրելու մասնագէտ մարդկանց կարծիքներին և համոզմունքներին, ես արդէն ցոյց տուի հիպնոտիզմին և մեսմերիզմին նուիրուած գլխում։ Ուստի անհրաժեշտ է կարգադրել, որ ոչ մէկը չը կարողանայ ազատութիւնից զրկուել, մինչ վրկայութիւն էլ որ տային հեղինակաւոր բժիշկները։ Խելագարութիւնը իրրև փաստ պիտի ապացուցուի ոչ թէ հիւանդի մտքերի, այլ նրա գործերի հիման վրայ, իսկ այս գործերը պիտի քննուեն երդուեալ դատաւորների ձեռքով, որոնք կարող են բժիշկների ցուցմունքներն էլ լսել, առաջ քան վճիռ կայացրնեն հիւանդին խելառանոցում անգամ արելու մասին։ Խելագարների ազատարանները պիտի դանուեն միանգամայն հասարակական իշխանութիւնների իրաւասութեան ներքոյ, որպէսզի այդ հիմնարկութիւնների սեփականատէրերը կամ կառավարիչները նիւթական ոչ մի շահ չունենան իրանց հիւանդներին կարելիին չափ երկար պահելու։

Նորերս, 1890 թ-ին հաստատուեց «խելագարներին վերաբերեալ» նոր օրէնքը, և հասարակութիւնը անկասկած կարծում է թէ առաջուայ սիստեմի վտանգաւոր հետևանքները այժմ խափանուած են։ Ոչ մի կերպ։ Այդ օրէնքի քննութիւնը ցոյց է տալիս, որ առնտրական սկզբունքների վրայ հաստատուած մասնաւոր խելառանոցները մնում են նախկին հիմունքների վրայ։ Բժիշկների կարծիքը — առաջուայ պէս ամենազօր է։ «Շուտափոյթ կարգադրութիւն» անելու անհրաժեշտ դէպքերում բաւական է մէկ բժշկի վկայութիւնը, որպէսզի ձերբակալուի կինը կամ արդամարդը հէնց իր տան մէջ, նամակցուի մասնաւոր խելառանոց և պահուի այնտեղ եօթն օր կամ մինչ որ ստացուի այդ առթիւ դատաստանական հրաման, որը երբեմն կարող է ձգձգուել ամբողջ երեք շաբաթ։ Այս դատաստանական հրամանը պիտի տայ համապատասխան դատաստանական իշխանութիւնը շահագրգռուած անձի խնդրանքը և երկու բժիշկների վկայութիւնների հիման վրայ։ Դատաւորը, եթէ ուզի, կարող է անանել ենթադրեալ խելագարին, բայց նա կարող է կարգադրել միայն բը-

ժիշկների ու խնդրատուի ցուցմունքները աչքի առաջ ունենալով։ Արած քննությունը չը պիտի հրապարակական լինի, բայց հաղիւ թէ կարելի է կասկածել, որ մեծ մասամբ դատաւորը կը հիմնուի բժիշկների ցուցմունքների և իրան ներկայացրած ուրիշ ապացոյցների վրայ։ Այնուհետև ենթադրեալ խելագարին կարելի է փակած պահել մէկ ամբողջ տարի, յետոյ—այլևս երկու տարի, ապա—այլևս երեք տարի և վերջապէս—այլևս հինգ տարի, եթէ ապաստարանի կառավարիչ-բժիշկը ամեն ժամանակամիջոցը լրանալուն պէս հաղորդի դատաւորին, թէ հիւանդը դեռ ևս առողջ չէ։ Եւ եթէ դատաւորի առաջին քննութեան ժամանակ կամ յետոյ բացուի, որ հիւանդը առողջ է եղել, հետևապէս ազատութիւն ստանայ, օրէնքը չէ նախատեսնում, որ խելագար համարուածը կարողանայ որևէ բացատրութիւն պահանջել իրան արգելման և բժշկական վկայութիւնների պատճառների մասին, նա նոյնիսկ չէ կարող իմանալ՝ իրան խելառանոց նստեցնողների աղդանունները, այնպէս որ ազատուելուց յետոյ էլ նա համոզուում է, որ իր հետ վարուում են՝ որպէս իսկական խելագարի հետ և մերժում են օրինական բաւարարութիւնը, եթէ նոյնիսկ իրան խելառանոց նստեցնողները դործել են ապօրինի կերպով։

Մասնաւոր խելառանոցում արդելուած ժամանակ հիւանդի նամակները, որ ուղղուած են որևէ պաշտօնական անձնաւորութեան անունով, պիտի ուղարկուեն ըստ հասցէի, իսկ բոլոր ուրիշ անձնաւորութիւններին, որոնց թուում և ամենամերձաւոր աղդականներին կամ բարեկամներին ուղղուածները յանձնուում են հասցէատիրոջը միայն ապաստարանի կառավարչի «բարեհայեցողութեամբ»։ Նոյնպէս աղդականների կամ բարեկամների հետ տեսնուելու համար պահանջուում է ապաստարանի հսկող յատուկ կոմիսիոնների կամ պաշտօնեայի թոյլտուութիւնը։ Բայց սրանք պարտաւոր չեն այդպիսի թոյլտուութիւնը տալու, այնպէս որ եթէ մասնաւոր ապաստարանի կառավարիչը կ'ասի, թէ այդ բանը յանկալի չէ կամ վնասակար է հիւանդի համար, ամենայն հաւանականութեամբ խնդիրքը կը մերժուի։ Այդպիսով դուրս է դալիս, որ մէկ որ ենթադրեալ խելագարը ապաստարան է ընկել, նրա այնտեղից ազատուելը ամբողջովին բժիշկներից է կախուած։ Ամեն բան նրանց ձեռին է։ Հիւանդին կարող են զրկել բարեկամների հետ—անձամբ և նամակով հաղորդակցութիւն ունենալուց. և թէև նա կարող է տեսնել պաշտօնական կոմիսիոնների կամ դրել նրան, այս չէ կարող դործին օդնել, եթէ միայն կառավարիչ-բժիշկը հիւանդին սխալմամբ համարում է առողջ կամ անձնական շահ ունի նրան ա-

պատասխանատու պահելու։ Սկզբից մինչև վերջ ոչ մի հրապարակականություն չի թույլ տալիս. հիանալի ոչ մի հնարավորություն չունի ջրելու իր մասին յայտնած սրեկ դատողություն կամ վկայություն, ոչ մի միջոց իր խելացիությունը հաստատելու հրապարակական դատարանում և ազատելու ընդհանուր պաշտպանողական իրավունքից, որը տալիս է ամենայնեսին յանցավորին։

Անձնավորության ազատության համար ավելի ևս վատագույն կլա կայ նույն օրէնքի 20-րդ բաժնի մէջ, որի համաձայն ամեն մի ասպիսան կամ ապրանքների խնամատարության պաշտօնեայ կամ վերակացու — կարող է աշխատանոց ուղարկել ամեն մի ենթադրեալ խելագարի, եթէ այդ անհրաժեշտ կը դանի հասարակական ապահովության և իրան՝ խելագարի բարօրության տեսակէտից։ Դժուար է հաստատել, մինչդեռ այս մի հատատ փատ է, որ վճռաբեկ դատարանի դատաւորները վճռել են, որ վերև յիշուած անձնավորությունների ամեն մէկը իրաւունք ունի այդպէս վարուելու մէկ մարդու տուած մասնաւոր տեղեկության հիման վրայ, նոյնիսկ առանց ենթադրեալ խելագարին տեսնելու, ոչ մի հնարավորություն չը տալով վերջինիս ասելու կամ ապացուցելու, թէ ինքը խելագար չէ։ Հէնց այսպէս են նրանք վճռել 1898 թ-ի մարտին։ Մի ոմն միստեր Հովարդ կուզէր իր կնոջ հետ. նա դուցէ կուարար մարդ է եղել, բայց գործով չէր անպատուել և նոյնիսկ ձեռք չէր տուել կնոջը։ Զը նայելով այս բանին՝ կինը գրնում է ապրանքների խնամատարության պաշտօնեայի մոտ և յայտնում, որ ինքը վախենում է, չը լինի թէ ամուսինն անձնասպանություն գործի կամ մորթի իրան՝ կնոջն ու զաւակներին։ Լոկ այս յայտարարության հիման վրայ, առանց հանգամանքները ստուգելու և անձամբ բացատրություն պահանջելու, Հովարդին բռնի վերցնում են և նստեցնում աշխատանոցը իբրև խելագարի։ Որովհետև դուրս եկաւ, որ նա բոլորովին առողջ է, նրան չաւտով ազատեցին, բայց նա մի դանդատ ներկայացրեց իր բաժնի «վերակացուի» դէմ, մեղադրելով որ անիրաւացի կերպով էր իրան ազատությունից զրկել։ Երդուեալների դատարանը վճռեց նրա օգտին առնել 25 ֆունտ ստերլինգ (մօտ 250 ռուբլի) տուգանք իրրև բաւարարություն կրած անարդանքի համար այն հիման վրայ, որ «նրան ձերբակալող պաշտօնեան հոգ չէր տարել պատշաճաւոր կերպով հաւատիանալ, թէ դանդատաւորը իրօք խելագար է եղել»։ Բայց վճռաբեկ ատեանի դատաւորները վճռեցին, որ ոչ

մի ապացոյց չը կայ, թէ «պաշտօնական» գործում էր, աչքի առաջ ունենալով որևէ ուրիշ շարժառիթ, բացի բարի ցանկութիւնից, հետևապէս նա չէ կարող որևէ պատասխանատուութեան ենթարկուել, և այդպիսով նա ազատուեց գանգատաւորի օգտին տուգանք վճարելուց։ Պարզ է, որ այս հիման վրայ ամեն մի դիւրաբորբոք կամ բարկացկոտ մարդ ազգականի լոկ մի յայտարարութեամբ, թէ ինքը վախենում է նրանից անարգուելուց, առանց այլևայլութեան, առանց որևէ քննութեան կարող է ձերբակալուել և նստել աշխատանոցը, իբրև մի խելագար, առանց իրաւունք ունենալու բաւարարութիւն պահանջելու ազատութիւնից զրկուելու համար։ Չէ՞ որ այս՝ միայն մի նմանութիւն է արդարադատութեան։ Ամեն մի անձնաւորութիւն, որը որևէ շարժառիթներով անիրաւացի զրկուել է ազատութիւնից, պիտի իրաւունք ունենայ պահանջելու կամ ներողութիւն կամ մի ուրիշ բաւարարութիւն այն իշխանութիւնից, որն այդ գործին մասնակից է եղել, առանց հարկադրուած լինելու անձամբ դատարանին դիմելու,— մի բան, որ շատ դլխացաւանք և ծախսեր է պահանջում և չէ ապահովում անարդար մերժում ստանալուց։

Ինկատի ունենալով այնպիսի դէպքերը, ինչպիսին է վերև բերուածը կամ նորերս տեղի ունեցած՝ միսս Լանչեստերի*) ձերբակալուելու և խելառանոց փակուելու խայտառակ դէպքը, չէ կարելի չը խոստովանուել, որ խելագարների վերաբերմամբ այժմ գործող օրէնքները իսկապէս վտանգաւոր են անձնական ազատութեան և մտքերի ազատ արտայայտութեան համար և այդպիսով ստորացնում են տասնիններորդ դարի վերջին տարիները։

---

*) Միսս Լանչեստերը մի երիտասարդ աղջիկ էր Լոնդոնի հարուստ բուրժուական ընտանիքից. նա յարել էր բանուորական շարժման, թողել ընտանիքը, տեղափոխուել Լոնդոնի բանուորական թաղերը և յայտարարել, որ ամուսնանում է բանուորական շարժման պարագլուխներից մէկի հետ, առանց որևէ կրօնական ծիսակատարութիւնների և ուրիշ պաշտօնական ձևականութիւնների։ Վրդովուած եղբայրները նրա թափուցին նրա բնակարանը երկու բժիշկների հետ, կապկպեցին նրան, վերցրին և նստեցրին խելառանոց, որտեղից աղջիկը ազատուց միայն շնորհիւ Լոնդոնի և ամբողջ երկրի մէջ սկսած ագիտացիայի։

Ն. Թ.

2. Պատերազմի վիճակը.

Տասնեթներորդ դարի առաջին կէսը նշանաւոր է մենամարտութիւնների վերացումով Անգլիայում։ Վերջերս արդէն մենամարտութիւնը ձեւականապէս ապօրինի բան էր համարւում, իսկ բուն իւր էութեան մասին, մեռաւակար էր համարւում բոլոր զարգացած մարդկանց կողմից։ Բայց վերջ տալ նրան բազմաթիւ մէջ աջողուեց միայն այն ժամանակ, երբ մենամարտութիւնը արդեն նրան դիւանագիտականների մէջ։ Հենց նոյն հասարակական կարծիքը, որը հարկադրեց սենեցնել մասնաւոր պատերազմի այդ ձեւը, հաւասար կերպով դատապարտում է նաև պատերազմը ազգերի մէջ՝ որպէս վիճեր լուծելու միջոց, վիճեր, որոնք յաճախ բարոյապէս հնչին են լինում և սակաւ բանականապէս ծանրակշիռ, որպէսզի արդարացնեն կեանքի և սեփականութեան սենեցումը, արդարացնեն ազգային սանլութիւնն ու ազգային ազգասութիւնը, պատերազմի այս անհրաժեշտ հետեւանքները։

Սակայն էր նայելով որ մի որոշ առաջադիմութիւն է նրկատւում պատերազմներին վերջ դնելու ձգտումների մէջ, մեր հարիւրամեակի երկրորդ կէսը միայ է եղել պատերազմական ոգու սաստիկ վերակենդանացմանը ամբողջ Եւրոպայում. վերջինս դառել է այժմ մի ընդարձակ բանակ, ուր իրար կողքին տեղաւորուել են հակառակ և թշնամական այժեր այնպիսի մեծ քանակութեամբ, որպիսին երբէք ծանօթ չէ եղել առաջ ամբողջ աշխարհին։ Այդ ահագին զօրագնդերը, որոնք օրէցօր նոր և նոր, աւելի ու աւելի մահաբեր զէնքով են զինւում, այնպիսի ահագին ծախսեր են պահանջում, որ մինչև անգամ ամենահարուստ ազգերը կարողանում են սրանց դիմանալ միայն չափազանց լարելով իրանց ոյժերը, անընդհատ աւելացնելով հարկերը և պետական պարտքերը, որոնք խորտակում են ժողովրդական մեծամասնութեան բարեկեցութիւնը։

1851 թւին տեղի ունեցած առաջին միջազգային ցուցահանդէսը այն միտքն էր թելադրում և այն յոյսն էր տալիս, թէ Եւրոպայի կառավարիչները կը ճանաչեն վերջապէս այն փաստը, որ խաղաղութիւնն ու առեւտրական յարաբերութիւնները կազմում ազգային բարեկեցութեան իսկական հիմքը։ Բայց նրանց մտքից հեռու էին այսպիսի բանաւոր դաղափարները. չուտով այս բանից յետոյ սկսուեցին մի շարք այնպիսի՝ ոչ մի բանով չ՚արդարացուող և անօգուտ տոհմական կռիւներ, որպիսին աշխարհը դեռ ևս չէր տեսել։ 1854—1855 թ. թ. Ղրիմի պատե-

բաղմը ծագել է բոլորովին մասնաւոր չահերից, սկսուել է առանց որևէ խելացի նպատակ աչքի առաջ ունենալու և զարհուրելի էր մարդկային զոհերով։ 1866 թ. Աւստրօ-պրուսական պատերազմը, ֆրանսիական արշաւանքը Մեքսիկա և սարսափելի ֆրանս-գերմանական պատերազմը՝ իշխող հարստութիւնների տոհմական կռիւներ էին, չ'ունէին բաւականաչափ ծանրակշիռ պատճառներ, որ կարելի լինէր արդարացնել նրանց, և միանգամայն ոչ մի կապ չ'ունէին ժողովուրդների բարօրութեան հետ, այն ժողովուրդների, որոնք մէջ էին բերուած այդ վէճերի ու խռովութիւնների ժամանակ։

Այդ պատերազմից առաջ եկած չարիքը չը վերջացաւ միայն մարդկային կեանքի խորտակումով և սեփականութեան կործանումով, մի բանով, որ պատերազմի անմիջական հետեւանքն է հանդիսանում. ոչ, այն օրից իվեր այդ պատերազմներն առաջ էին բերում այն հրէշաւոր սպառազինութիւններն ու ազգային նեղամտութիւնն արդարացնելու համար, որոնցից հեծում է այժմ ամբողջ Եւրոպան։ Զէնքի ու զինուորական պիտոյքի քանակութիւնն ու արժէքը օրէցօր աւելանում էր, քանի աւելի էին գործադրում զինուորական նպատակների համար այն մեքենական հնարուածքներն ու գիտնական գիւտերը, որոնք այլ դէպքերում, պատշաճաւոր հանգամանքներում պիտի խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն առաջացէին, բայց այժմ զինամոլութեան ոգու ստրուկ դառնալով՝ ամբողջովին ատելութիւն են սերմանում ազգերի մէջ և աղքատացնում են ժողովուրդները։

Այդ զինուորական զարգացման ճանապարհի վրայ առաջին քայլերն էին—նոր զէնքի ներմուծումը պրուսական զօրքի մէջ 1846 թ., չոգու գործադրութիւնը Անգլիայում պատերազմական նաւերում 1840 թ. և երկաթէ զրահի գործածութիւնը պատերազմական նաւերի պաշտպանութեան համար Ֆրանսիայում 1859 թ.։ Դարիս մնացած ժամանակը վիայ է եղել մի կատաղի մրցման բոլոր եւրոպական մեծ պետութիւնների մէջ, որոնք ճիգ էին թափում իրար գերազանցելու զէնքի մահաբեր ոյժի և կանոնաւոր զօրքերի չատացնելու մէջ։ Իսկ ինչ վերաբերում է ծովային պետութիւններին, նրանց մէջ տեղի էր ունենում աւելի վայրագ մրցում, որի համար գործ էին դրուում ժամանակակից գիտութեան բոլոր արդիւնքները, թնդանօթների աւերիչ զօրութիւնը և նաւերի յարձակողական ու պաշտպանողական ոյժը աւելացնելու նպատակով։ Սկսեցին գործ ածել դանազան նոր պայթուցիկ նիւթեր ռումբերի, ականների և տորպեդների (ծովառումբերի) համար. ձուլեցին վիթխարի մե-

ծութիւն և այժ ունեցող հեռաձիգ թնդանօթներ, կառուցեցին 10—15 հազար տոն*) բռնանցակոց զինուորական նաւեր 10-ից մինչ 20 դիւյմ հաստութիւն ունեցող պողպատէ զրահներով, հրէշաւոր մեքենաներով, որոնք մի-մի ձիաւ այժ են արտադրում նաւերի խրատանցիր տոնի վրայ և շարժեցնում են նաւերը 12-ից մինչև 22 և աւելի հանգոյց (30—40 վերստ) արագութեամբ մէկ ժամում. այս զինուորական նաւերը այն աստիճան կերպարանափոխեցին անգլիական նաւատորմիղը, որ այժմեան նաւերի մեծագոյն մասը ոչ մի նմանութիւն չունի այն մեծագանձ եռայարկ նաւերի ու փառահեղ ֆրեգատների հետ, որոնց օգնութեամբ անգլիացիք այնքան ծովային յաղթութիւններ են տարել և որոնք մի յիսուն տարի առաջ անգլիական նաւատորմիղի գլխաւոր այժն էին կազմում։

Թէև ամէն տեսակ զինուորական նաւերի բնդհանուր թիւը անգլիական նաւատորմիղի մէջ գրեթէ նոյնն է մնացել, ինչ որ էր ներկայ դարիս կիսին, սակայն նրանց յարձակողական և պաշտպանողական այժը և նրանց արժէքը այժմ անհամեմատ մեծ է դառել։ Գրեթէ բոլորն էլ կառուցուած են երկաթից ու պողպատից և լցուած են թանկագին մեքենաներով։ Տորպեդաձիգ մակոյկներն ու տորպեդա-խորտակիչները ուրիշ պաշտօն ունեն, քան թէ մեր հին նաւատորմիղների նախկին, աւելի փոքր նաւերը։ Մեր ժամանակակից աւաջնակարգ զրահակիր աշտարակաւոր չոգենաւերից մի քանիսը նստել են մի-մի միլիոն ֆունտ ստերլինգ (մօտ 10 միլիոն բուբլի), և այնուամենայնիւ այդ լոզացող ամրոցները կարող են յաստակը գնալ՝ ընդհարուելով իրանց ընկերների հետ, ինչպէս որ այս պատահեց Vangard-ի հետ Կինգստաունի մօտ 1875 թ. և մօտերս Victoria-ի հետ Միջերկրական ծովում։ 110 տոննանոց հակայ—թնդանօթները արժեն ամէն մէկը 200 հազար բուբլի, իսկ աւելի սովորականները—67 տոննանոցները—140 հազար։ Բոլոր ժամանակակից թնդանօթները, որպէս և ռուժերը, հմտութեամբ չինուած մեքենաներ են, որոնք ամենաստեղ կատարելութեանն և նրբութեանն են հասցրուած։ Ակամայ տխրութեամբ ամէն մի մտածող մարդ նայում է այդ զարմանալի արուեստի վրայ, այդ աշխատանքի վրայ, ժամանակակից պետութեան այդ իսկ-որ հրաշալի արդիւնքների վրայ, որոնց նպատակն է լոկ աւերմունք և կործանում։

Վեց մեծ եւրոպական պետութիւնները այժմ ունեն մօտ

---

*) Մէկ տոննը հաւասար է 60 պուդի։

Ե. Թ.

300 մարտանաւ և կրէյսեր, ամեն մէկը 2,000-ից մինչև 15,000 տոն ունեցող, և մօտ 2,000 մանր նաւեր, որոնք կարող են 50 անգամ աւելի շատ մարդկային կեանք և ստացուածք խորտակել, քան թէ ներկայ դարի առաջին կիսի բոլոր նաւատորմիղները միասին։

Բայց նոյնիսկ նաւերի այս ահագին արժողութիւնը, որը ուղղակի մի կորուստ է հանդիսանում ժամանակակից քաղաքակրթութեան համար,—շատ աւելի չնչին է Եւրոպայի ցամաքային զօրքերի ծախսերի հետ համեմատած։ Զինուորական մարդկանց թիւը անչափ շատանում է. նրանց զէնքն ու հագուստը աւելի ու աւելի թանդ է նստում. պատերազմի ժամանակ կոչուելիք պահեստի ոյժերը գրեթէ ամբողջ չափահաս արական ազգաբնակութիւնն են ընդգրկում, և սրանց համար պատրաստ պէտք է ունենալ զէնք, շոր և բոլոր ուրիշ զինուորական պիտոյքները։ Եթէ միայն հաշուի առնելու լինենք վեց մեծ պետութիւնների զօրաբանակները խաղաղ ժամանակ, նրանց զինուորների թիւը այժմ հասնում է երկք միլիոնի. եթէ սրա վրայ աւելացնենք նաւատորմիղների մշտական զօրքերը, կը ստանանք մի թիւ, որը շատ աւելի մեծ է 3 միլիոն մարդուց—և այդքան մարդ կեանքի հէնց ծաղիկ հասակում խլում են արդիւնաւոր աշխատանքից, նուիրում են «հայրենիքի պաշտպանութեան», իսկ աւելի յաճախ—յարձակման և աւերման գործին։ Բայց այս էլ ամբողջ կորստի միայն մի մասն է։ Այդ 3 միլիոն մարդու պահելու ծախքերը, ուտեստը, շորը, զէնքը, և բոլոր մանր զինուորական պիտոյքները, մարտանաւերի պատրաստի պահելը պատերազմի դէպքի համար, պահեստների մէջ ամեն տեսակ մթերքների շարունակ նորոգելը, պաշտօնաթող սպաների և վիրաւորուած զինուորների կենսաթոշակները և բազմաթիւ ուրիշ ծախքերը, որոնք կապուած են ընդարձակ զինուորական կազմակերպութիւնների հետ,—այս ամենը ամեն տարի աւելի քան 180 միլիոն ֆունտ ստերլինգ (մօտաւորապէս 1,800 միլիոն բուբլի) է նստում։ Եթէ մէկ բանուորի միջին տարեկան վարձը (նրա տարեկան ապրուստի ծախքերը) մօտ 30 ֆ. ստերլինգ (մօտ 300 ր.) հաշուելու լինենք, կամ միևնոյն է թէ շաբաթական 12 շիլլինգ (մօտ 6 ր.),—ինչպէս առնելով այժմեան ցածր օրավարձը և կեանքի ժանութիւնը Ռուսաստանում, Իտալիայում, Աւստրիայում և ուրիշ ժայր-ցամաքային տէրութիւնների մէջ,—այն ժամանակ ազգային սպառազինութիւնների այդ ահագին և բարբարոսական սիստեմի պահպանութիւնը պիտի գոնէ 6 միլիոն մարդու անընդհատ աշխատանք պահանջէ։ Եթէ այս բանի վրայ աւելացնենք այն

աշխատանքը, որ դրած է գրուում՝ սովորաբար ամեն պատերազմի ժամանակ աչնչացող հասարակական և մասնաւոր սեփականութիւն ստեղծելու համար, աւելացնենք նաև նրա պայի փոքր պետութիւնների ծովային և ցամաքային այժերը, մենք մի հակայական թիւ կը ստանանք, որ բաղմացած կը լինի 10 միլ. օգտակար կամ արդիւնաւոր աշխատանքից խլուած մարդուց —10 միլլիոն մարդ, որոնց կեանքը ուղղակի կամ անուղղակի կերպով գոհ է բերուած Կուի կուռքին և որոնք, ասել է, այսպէս կամ այնպէս պիտի ապրեն մեռցած բանող մարդկանց աշխատանքի հաշուով։

Իսկ որ սարսափելի ծաղր է այս թէ քրիստոնէութեան տեսակէտից և թէ ասոյդէմ քաղաքակրթութեան տեսակէտից։ Այդ բոլոր ազգութիւնները՝ ոտից գլուխ զինուած, ամեն մի յարմար ասթի ապասող, որպէսզի գործի դնեն իրանց անհատական զինուորական այժերը սեփական փառքի և հարեւանների ջնջման համար, իրանց դեռ կոչում են քրիստոնեայ ազգութիւններ։ Նրանց կառավարութիւնները բոլորը միասին և ամեն մէկը առանձին-առանձին—բարձրաձայն, իբր աշխարհի դաւանում են իրանց քրիստոնէութիւնը, իսկ ճշմարիտ քրիստոնէական գործերի մասին խօսք անգամ չի լինում. չը կայ ճշմարիտ մարդասիրութիւն, չը կայ փոխադարձ ներողամտութիւն, չը կայ օգնութիւն ճնշուած ազգութիւնների համար, չը կայ ոչ մի ջանք խաղաղութիւնն ու փոխադարձ բարեացակամութիւնը ապահովելու։ Եւ այս ամենը տեղի է ունենում, չը նայելով որ ներկայ դարի վերջին կիսում անկասկած աճել է իսկական քրիստոնէական ոգին։ Այս ոգին աջողել է նոյնիսկ մի փոքր սեղմացնել պատերազմի անխուսափելի սարսափները և առաջ է բերել մի քանի մեղմ սկզբունքներ, օրինակ, անձեռնմխելի են հրատարակուած պատերազմին անմիջապէս չը մասնակցող անձինք, աւելի է խնամք տարուում վիրաւորների մասին,—նոյնիսկ թշնամական բանակի վիրաւորների մասին. վերջապէս ճանաչուում է, որ նոյնիսկ վայրենի ազգերը որոշ իրաւունքներ ունեն։

Միլիտարիզմի—զինամոլութեան ներքաղաքականացնող ազդեցութիւնը դուցէ երբէք այնպէս սաստիկ երևան չէ եկել, որպէս վերջին տարիներս, երբ երոպական բոլոր մեծ պետութիւնները նայում էին բոլորովին սառնարիւն կերպով, ինչպէս մի քաղաքակրթուած և քրիստոնեայ ժողովուրդ—հայ ազգը ամենանողութ հալածանքների, յափշտակութիւնների և կոտորածների էր ենթարկուում կիսաբարբարոս-տաճկական սուլթանի ուղղակի հրամանով կամ նրա համաձայնութեամբ և հաւանու-

թեամբ, բաւական էր որ պետութիւններից երկու

վարութիւն վրայ, և այդ հնչումը անգի է ունենում յանուն պետութիւն մեծութիւն և ազատութիւն, յանուն առևտրի ընդարձակման կամ քաղաքակրթութիւն զարգացման։ Աւելն ան-սակ արկածներ են հնարում, միայն թէ կարելի լինի ուշադրութիւնը հեռացնել մայր-երկրի բանտարկների սոված-ծարաւութիւնից, ազատութիւնից ու ապանիչ ասորեայ պայմաններից և անդրադարձային կամ կիսա-անդրադարձային գաղութներից շատերի մէջ տիրող հոգի քաղաքակուած սարկութիւնից։ Ու հզաստակ ազգերի կառավարութիւն մեր բրիտանական սիստեմը գատապարտելի է, և բնում է Հնդկաստանի անմերջ ժանտախտից, սովից, ազատամարութիւններից, որ դեռ ևս կրկնում են այնտեղ հարիւրամեայ բրիտանական գերիշխանութիւնից և քառասունամեայ անմիջական կառավարութիւնից յետոյ։ Այժմ ոչ ժանտախտ, ոչ էլ սովը անգի չեն ունենում լաւ կառավարուող հասարակութիւնների մէջ։ Եւ սովը մի պարբերական երևոյթ է Հնդկաստանի պէս երկրում, ուր ժողովուրդը աշխատասէր է և հոգը արդարանց։ Այս ամենը միայն այն կառավարութիւն ձևի անմիջական հետևանքներն են, որը ստեղծում է միայն տիրապետող դասակարգերի շահերի մասին, փոխարէն կառավարուողների, հպատակների շահերը ոչպէս կառավարութիւն առաջին և միակ նպատակը ունենալու։ Բայց այդ կողմից բան Անգլիայում էլ կեանքը աւելի լաւ պայմանների մէջ չէ, քան թէ Հնդկաստանում։ Բանտարկների մեծագոյն մասի սարսափելի դրութիւնը, նրանց կեանքի կարճատևութիւնը, երեխաների մահացութիւնը և չքաւոր դասի անտանելի վիճակն ու միլիոնաւոր մարդկանց սրատաւորութիւնը, մարդկանց, որոնք հարկադրուած են մեր մեծ քաղաքների նեղուզնեներում ապրելու,—այս ամենը ոչ համաչափութեամբ մեծանում է, քանի աւելի է մեծանում մեր ազգային հարստութիւնը և քանի աւելի ենք մտնում կառավարութեան կենտրոնին։ Չէ որ այս ամենը աւելի ամօթալի է, քան թէ սովը հեռաւոր Հնդկաստանում։ Թէ այս և թէ այն արդիւնք է միևնոյն սիստեմի—բանտարկների հարստահարութեանը յոգուտ իշխող դասակարգերի շահերի. թէ այս և թէ այն միատեսակ հանդիսանում է որպէս ասանելիներորդ դարի ամենասոսկալի թերութիւններից մէկը։

Այս գլխի մէջ համառօտակի նկարագրուած իրերի դրութիւնը ապացոյց է ոչ թէ մեր առաջադիմութեանը, այլ հետադիմութեանը։ Ապագայ պատմագիրը ցոյց կը տայ, որ մենք, ասանելիներորդ դարի մարդիկս, բարոյապէս էլ, ընկերականապէս էլ անընդունակ ենք եղել իշխելու և պատշաճաւոր կերպով օգտուելու այն զօրեղ ոյժերից, որ մեր ձեռքն էին դրել իբար

ԴՐԱԴԱՐԱՆ